



**«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ա

15 հուլիսի 2021 թվականի

**«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐ ՌՈՒՍՏԱՄ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ռուստամ Սահակյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածները և ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով, ՎՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ռուստամ Սահակյանին 2021 թվականի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 6-ը ներառյալ տրամադրել 2020 թվականի ամենամյա արձակուրդի 10 (տաս) աշխատանքային օրերը:
2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ռուստամ Սահակյանի ամենամյա արձակուրդում գտնվելու ընթացքում 2021 թվականի հուլիսի 26-ից մինչև վերադարձը, ռեկտորի պարտականությունների կատարումը հանձնարարել գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Վարդուհի Հովսեփյանին՝ վճարելով փոխարինվողի աշխատավարձի 30%-ի չափով՝ համաձայն ռեկտորի 2013 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 1473 Լ/Կ հրամանի:
3. Գլխավոր հաշվապահին՝ վճարումը կատարել համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Դ. Տեր-Ստեփանյան